

Ա Յ Գ Ե Կ Ո Ւ Թ

(ՀՍԽՀ Հողծովխմասի հրահանգը՝ խաղողի բերահավաքի յեղ նրա
օեխնիկական վերամշակման ժամանակ կտուսները դեմ պայտար
կազմակերպելու մասին)



634.8

Ա-59

24 SEP 2011

ԱՅԳԵ - ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԳԻՏԱ - ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԶՈՆԱԼ ԿԱՅԱՆ

Մասայական սերիա

Գրաչ 18

634.8

Ա-59

48

Ա Յ Գ Ե Կ Ո Ւ Թ

(ՀՍԽՀ Հոգծողկոմասի հրահանգը՝ խաղողի բերահալալի յեկ նրա
սեխնիկական վերամտակման ժամանակ կորուստների դեմ պայքար
կազմակերպելու մասին)

3978

37788

▲▲▲



1986

ՅԵՐԵՎԱՆ

Հ Ի Ա Հ Ա Ն Գ

**ԽԱՂՈՂԻ ԲԵՐԲԱՀԱՎԱԲԻ ՅԵՎ ՆՐԱ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ
ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅԲԱՐ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Բերհաճաժափի ամբողջ աշխատանքները պետք է կատարվեն կորուստների դեմ պայքար կազմակերպելով» (Համ. Կոմկուսի Կենտկոմի յեվ Միությունահան Ժողկոմխորհի վորոշումից):

Այգեգործությունը ժողովրդական տնտեսության մեջ իբր պատկառելի տեղն ունի ինչպես բան-մատակարարման, այնպես և բարձրորակ եքսպորտային մթերքների արտադրության մեջ:

Այս տարի, շնորհիվ համեմատաբար ավելի բավարար ժախկություն, խաղողի այգիների միջին բերքատվությունը բարձր է՝ համեմատած նախորդ տարիների հետ: Աշտարակում և Վաղպատում հեկտարից սպասվում է 60—65 ցենտ., Ղամարլվում և Վեդիում՝ 70—75 ցենտ., և այլն: Սակայն այս բավարար համարել չի կարելի: Դեռևս ագրոտեխնիկական աշխատանքները լրիվ ու ժամանակին չեն կատարվում և վոչ մի շրջանում: Դրա հետ միասին, դեռ չի ապահովվում բարձր բերքատվությունը՝ հեկտարին 100 ցենտներ և ավելին: Ուստի ավելի ուշադիր պետք է լինել յե-

դած բերքի նկատմամբ և ամեն կերպ պայքարել կորուստ-
ները դեմ:

Ամեն տարի, միայն խաղողի բերքահավաքի ժամանակ,
անփութության պատճառով, բերքի ահագին կորուստ ենք
ունենում, կորչում ե բերքի առնվազն 8—15⁰/₀-ը: Նույն-
պիսի կորուստներ լինում են և՛ խաղողի հասունացումից
մինչև բերքահավաքը, և՛ տեխնիկական վերամշակման ու
մնացորդների ոգտագործման ժամանակ:

Վորպեսզի կորուստը նվազագույն չափի հասցվի և
ստացվի հնարավոր մաքսիմում բերք, անհրաժեշտ ե բեր-
քահավաքի ամբողջ ընթացքում, մթերումների և տեխնի-
կական վերամշակման ժամանակ՝ կազմակերպել և կիրա-
ռել հետևյալ միջոցառումները.

Հասունացումից մինչեւ բերքահավաքի օրջանը.—
Խաղողը հասնելիս նրա թշնամիները շատանում են: Սկըս-
վում ե գողութուն. գողանում են պատահական մարդիկ,
գողանում են գողության մեջ հմտացած անձնավորու-
թյունները, ալգիների մոտով անցնող ճամբորդները, գողա-
նում են իրարից անգամ հարևան ալգետերերը: Գողու-
թյան ժամանակ վնասում են վոչ միայն բերքին՝ խաղողին,
այլև վազին. շատ անգամ, առանց դանակի ու առանց
մտածելու վազի մասին, քաշում են վողկուղից, վորի ըն-
թացքում կտրվում են վազի մատերը և թևերը:

Բերքին մեծ չափով վնասում են նաև շները, թռչուն-
ները և այլն: Այդ ե պատճառը, վոր հենց սկզբից պետք ե
պաշտարել կորստի դեմ՝ կազմակերպելով պաշտպանու-
թյան գործը: Յուրաքանչյուր բրիգադ, վորը պատասխա-
նատու չե իրեն կցած ալգու բերքատվությանը, իր լավա-
գույն անդամներին պետք ե հանձնարարել խաղողի պաշտ-
պանելու գործը:

Խաղողի ե նրա պրոդուկցիայի վորակն ապահովելու
համար բերքահավաքից առնվազն 20 օր առաջ պետք ե
գաղարեցներ բոլոր տեսակի բուժումներն ու ջրելը:

Ինվենսարի յեվ տմանների պահպանումը.— Չափա-
դանց մեծ նշանակութուն ունի անհրաժեշտ ամանների և
ինվենտարի ժամանակին, նախորոք պատրաստումն ինչ-
պես բերքահավաքի համար, նույնպես և նրա տեխնիկա-
կան վերամշակության համար:

Չպետք ե մոռանալ, վոր համապատասխան, լրիվ և
մաքուր ամաններն ու ինվենտարը վոչ միայն ապահովում
են վորակով պրոդուկցիա, այլև ամենամեծ յերաշխիքն են՝
բերքն անկորուստ հավաքելու և վերամշակելու: Քիչ չեն
դեպքեր, յերբ մեր ալգեդործական տնտեսություններում,
չմաքրված ամաններ գործածելու հետևանքով, ստացված
ղինին անդուրեկան, յուրահատուկ հոտ ե ստացել:

Ուստի, յուրաքանչյուր խորհանտեսութուն և կու-
տնտեսութուն հաշվի պետք ե առնի իր ալգիներից
ստացվելիք բերքը, թե նրանցից ինչքանն ե հանձնվելու
գործարանին, ինչ քանակով ե մնալու տնտեսության ներ-
սում վերամշակելու համար, կամ թարմ վիճակում սալա-
ռելու, և այլն: Դրա համար ել նախորոք պետք ե պատ-
րաստել բերքահավաքի և վերամշակման համար անհրա-
ժեշտ ամաններն ու ինվենտարը:

Բերքահավաքի և վերամշակման ժամանակ գործած-
վող ամաններն ու ինվենտարը (կողովներ—կթոցներ, կաթ-
սաններ, տակառներ, չաններ, պոմպեր, մամլիչներ, խաղո-
ղաջարդ մեքենաներ և այլն) պետք ե լավ հակառեխել,
լվանալ և մաքրել: Ուշադրութուն պետք ե դարձնել մա-
տաններին և այն վայրերի վրա, վորտեղ խաղողը պետք ե
հավաքվի և վերամշակվի. նման տեղերը ևս պետք ե հա-

կանխել և լավ լվանալ: Ինվենտարը, ամանները, արանսպորտը պետք է պատրաստ լինեն բերքահավաքից առնվազն 10 որ առաջ, մաքուր պահվեն մինչև գործածելը, և ընդհանրապես աշխատանքը պետք է դասավորել ափսեա, վորպեսզի ամբողջ բերքահավաքն ընթանա առանց ընդհատումների և ավարտվի նախատեսված ժամկետում:

Անհրաժեշտ է բերքահավաքն ապահովել նաև վորակյալ կաղերերով:

Այգեկուծի (այգեխաղի) ժամանակը.—Բերքի ամենաշատ կորուստը լինում է այգեքաղի ժամանակ. վորքան բերքն ուշ հավաքվի, այնքան կորուստը մեծ կլինի: Գինեգործության համար խաղողը պետք է քաղել նրա տեխնիկական հասունության ժամանակ, վորի համար պետք է խորհանդեսութուններում և կոլտնտեսութուններում հատուկ հսկողություն սահմանել՝ հասունության ժամանակը վորոշելու: Սեղանի խաղողը պետք է սկսել քաղել այն ժամանակ, յերբ հասունացել է և կարելի չէ գործածել: Ընդհանուր բերքահավաքը Հոգոկոմատի կողմից նախատեսված է հոկտեմբերի 1-ից մինչև 25-ը: Բերքահավաքը պետք է կատարել միաժամանակ՝ մասսիվներով և, վորքան կարելի չէ, ժամկետը պահպանելով: Բերքահավաքի ժամանակ այգում ավելորդ մարդ չպիտի թողնել. այգում պետք է աշխատեն կազմակերպված բրիգադների ոգակներ, վորոնց քանակը և արտադրողականութունը պետք է համապատասխանեն փոխադրողականի և վերամշակման կարողությանը: Խաղողը քաղել խնամքով, անպաճառ սուր դանակով, վորչ մի դեպքում չի թուլաարժուժում ձեռքով պոկոտելը, կամ անգամ բութ դանակներով քաղելը, վորի ժամանակ հատիկները հեշտությամբ են թափվում և անգամ վնասվում են վազի մատերն ու թե-

վերը: Գետին թափված խաղողը պետք է խնամքով հավաքել, մաքրել և գործածել:

Անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել քաղելու ժամանակ խաղողի տեսակավորման վրա. պետք է փոսածները, հիվանդութուններից և վնասատուներից վնասվածները, չհասածները, չոր մնացած վողկուղները ջուկել առողջներից և առանձին հավաքել, յերբեք չխառնել առողջների հետ, քանի վոր վերջիններս ազդում են արտադրանքի վորակի վրա բացասական իմաստով: Բրիգադները պետք է հսկեն, վոր մշակները կողովները և դուլերը դատարկելիս ու սալերը բարձելիս խաղողը չթափեն, շաղ չտան:

Քաղած խաղողը յերբեք չի թուլաարժուժում մինչև նրա փոխադրումն այգու մեջ ազատ տեղ, հողի վրա կուտակելը, ինչպես անում են այդ Դամարվի շրջանում. պետք է քաղել այնքան, վոր անմիջապես սալերը հնարավորություն ունենան տեղափոխելու: Սալերով տեղափոխելիս խաղողն այնպիսի ամանների մեջ լցնել, վոր ճանապարհին շիրան չթափվի (տակառ). կողովներով տեղափոխելը նպատակահարմար չէ:

Վորևե սառնա քաղելուց հետո նորից պետք է ըստուգել, և յեթե կան թողած վողկուղներ կամ գետին թափածներ, պետք է հավաքել, քանի վոր դեպքեր են լինում, յերբ քաղողները դիտավորյալ կերպով խաղողը պահում են թիփերի վրա, վորպեսզի հետո իրենց համար քաղեն: Այգեքաղից հետո այգիների մեջ անասուններ բաց թողնելը խիստ արգելվում է:

Տեխնիկական վերամշակման ժամանակը.—Մեր այգեգործական խորհանդեսութուններն ու կոլտնտեսութունները, վորոնք մեծ տարածությամբ խաղողի այգի-

ներ ունեն, խաղողի վերամշակման աշխատանքները պետք է մեքենայացման յենթարկեն: Մեքենայացրած գինեգործությունն ավելի քիչ կորուստ է տալիս, քան վոչ մեքենայացրածը: Ինքնաշեն մամլիչները կամ փոքր պտուտակավոր ճզմիչները հնարավորություն չեն տալիս ստանալու խաղողի մաքսիմում հյութը: Կորուստը քիչ է լինում աշխատանքներն արագ կատարելու դեպքում, վոր է հնարավոր է միայն մեքենայացրած գինեգործության ժամանակ:

Պետք է հետևել, վոր սալերը դատարկելու և խաղողը ջարդիչ, չանչափան մեքենաներին ու մամլիչներին տալու ժամանակ շող չտրվեն, գետին չթափվեն: Աշխատանքի յեռուն ժամանակ, բացի աշխատող բանվորներից, ալ «հյութեր» չպետք է ներկա լինեն:

Բրիգադիւնները պետք է հետևեն, վոր մամլիչներին առաջ զրած ամանները և շիրալի (քաղցվի) տակառները շատ լցվելուց չթափվեն: Չաները, տակառները, կարասները չպետք է լրիվ լցնել, ալ պետք է մի քառորդով պակաս թողնել՝ խմորման (լեփ գալու) ժամանակ թափվելը կանխելու համար: Խմորման ժամանակ չաների, տակառների, կարասների բերաններն ամուր չպետք է փակել, ալ պետք է անցք թողնել, ալապես ամանները կարող են պալթել:

Տեխնիկական վերամշակման բոլոր աշխատանքները պետք է կատարվեն մասնագիտական ցուցմունքների համաձայն:

Մնացորդների ոգսագործումը. — Գինեգործության մնացորդների ոգսագործումը մեծ նշանակութուն ունի. մնացորդը բազմատեսակ մթերքներ է տալիս — գինեբար, տանին, յուղ, սպիրտ, սուրճին փոխարինող նյութ և այլն: Սա

կաջն ալք մթերքները չի կարելի ստանալ, չեթե մնացորդը, ինչպես հարկն է, չպահվի: Ճզմված մասսան պետք է անմիջապես մամլիչի տակից հավաքել և լցնել կարասները, տակառները կամ ցեմենտից շինած ավազանները և լավ սեղմել, ամրացնել. վերջինից է կախված նյութի և նրա վորակի պահպանումը:

Գինու խմորումից հետո ամանների մեջ գոյացած փուր (դիրտը) նույնպես պետք է խնամքով հավաքել և պահել:

Այն կազմակերպությունները, վորոնք անմիջապես զբաղվում են գինեգործության մնացորդների ուտիլիզացումով, պետք է մոտիկ կանգնած լինեն խորհրդատեսական, կոլտնտեսական արտադրությանը՝ մնացորդները ժամանակին ոգսագործելու համար:

Նշված բոլոր աշխատանքների նկատմամբ յուրաքանչյուրն իր կատարած աշխատանքի համար պատասխանատու պետք է լինի, առանց դիմադրկության, լայն կիրառելով սոցմրցումն ու հարվածայնությունը. նա պետք է պայքարի կորուստների դեմ և վորակական ցուցանիշների համար:

Շրջանային կազմակերպությունները պետք է լայն քննության առարկա դարձնեն բոլոր միջոցառումները՝ կորուստների դեմ պայքարելու հարցի վերաբերյալ և, տեղական պայմանների համաձայն, կիրառեն կյանքում:

Հոդվողիով՝ Վ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Այգե-Բանց-Վարչ. պես՝ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Դ. ՇԱՏԱՆՈՐՅԱՆ

ԱՅԳԵԿՈՒԹ

Հասել ե խորհանդեսական և կոլտնտեսական այգի-
ների խաղողի բերքը: Ծանր բեռան տակ հրճվում են
վաղերը: խաղող, հաշաբաշի, քիշմիշի, կախեթի և այլ
բաղմաթիվ փոփոխակների քաղցր, հյութառատ, կենսա-
բար փողկոպները ճրագի պես վառվում են թփերի վրա:
Յերբ մանում ես մեր այգիները, զգում ես, վոր սոցիա-
լիստական դաշտերի հարվածալիններն արդեն բռնել են
կուլտուրական աշխատանքի և բարձր բերքատվության
ճանապարհը:

Մի նայե՛ք առաջին խորհանդեսության Դավթայի այ-
գիներին, յերրորդ խորհանդեսության մուսկատներին,
Վաղարշապատի, Աշտարակի, Ղամարլուի կոլտնտեսու-
թյունների այգիներին — մշակված են նրանք՝ փորված,
քաղհանված, բուժված: Խաղողի փողկոպները լավ խնա-
մած մանուկների նման ծիծաղում են դեմքիդ, առաջաց-
նելով քո մեջ ուրախության քաղցր զգացմունք: Կոլ-
տնտեսական կարգերի ուժը մեծ ե. սոցիալիզմը հաղթա-
նակում ե ամեն տեղ: Չես կարող չհիշել կուսակցության
19-րդ համագումարում մեծ առաջնորդի արտասանած
խորհմաստ խոսքերը.

«Ըստ բանի էյուրյան՝ հաշվեսու ժամանակաբաժանը
գյուղատնտեսության համար վոյ այնքան արագ վերելի յեվ
հուժկու քափ առնելու ժամանակաբաժան եր, վորքան
մեծավորագույն ապագայում այդպիսի վերելի յեվ այգ-
պիսի քափ ունենալու համար նախադրյալներ ստեղծե-
լու ժամանակաբաժան»: Առաջին հնգամյակի տարիներում

մենք ստեղծեցինք հզոր սոցիալիստական գլուղատնտեսություն, իսկ այսօր արդեն քաղում ենք նրա լիառատ պտուղները: Մեր անգլիաների նախորդ և այս տարվա անդհատ բարձրացող բերքն անցյալի համեմատությամբ մի փալլուն աղացույց է առաջնորդի խորիմաստ խոսքերի, աչի բանի, թե ինչ կարող է անել կոլեկտիվ կամքը, թե ինչպես կոլտնտեսական կարգերի շնորհիվ այսօր արդեն մենք ունենք բոլոր հնարավորությունները՝ գլուղատնտեսություն բոլոր ճյուղերում տալու բարձր բերք, իսկ այգիների բերքատվության ասպարիզում մոտակա տարիներում հասնելու աչի դրություն, վոր մեկ հեկտարից ստանանք վոչ թե 65—75, ալ 100—150 ցենտներ բերք:

Մոտենում են բերքահավաքի օրերը: Մեր խորհուրդն տեսություններն ու կոլտնտեսություններն այգեգործության ասպարիզում թեկոխում են մի նոր, պատասխանատու շրջան, մի շրջան, յերբ ամբողջ տարվա՝ քրտնաշան աշխատանքից հետո պետք է հավաքել աշխատանքի քաղցր պտուղը: Լցնենք մեր մառաններն ու ամբարները լիառատ սոցիալիստական բերքով, վորը տառնյակ հազարավոր աղնիվ, աշխատող կոլտնտեսականներին խոստանում ենք, ունենոր, յերջանիկ և կուլտուրական կյանք:

ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏՎԵԼ ԱՅԳԵԲԱՂԻՆ

Այգեքաղի և ընդհանրապես ամեն մի բերքահավաքի ամբողջ հաջողությունը կախված է նրանից, թե ինչպես են նախապատրաստվել: Գործի լավ նախապատրաստումը հաջողության կեսն է: Քիչ չեն յեղել դեպքեր, յերբ չնախապատրաստվելու կամ վատ նախապատրաստվելու հետևանքով բերքահավաքն ընթացել է անկազմակերպ, աշխատանքը ձգձգվել է՝ տեղի տալով խոշոր կորուստների:

Բերքահավաքի նախապատրաստությունը պետք է սկսել այգիների պահպանության ուժեղացումից: Վորքան հասունանում է բերքը, մոտենում է նրա հավաքելու շրջանը, աչեքան շատանում են նրա թշնամիները, գողանում են մարդիկ, փչացնում են անասունները, ուտում են թռչունները: Պետք է կազմակերպել անխնա պալքար բոլոր տեսակի գողությունների, հափշտակումների, փչացումների դեմ, վորպեսզի մեր այգիներից վոչ մի վողկույց խողող չպակասի: Պետք է արգելել բոլոր տեսակի անասուններն ու թռչուններն այգիներում պահելը: Գողության ու փչացման ամեն մի դեպք պետք է հայտաբերվի և պատժվի խորհրդային ռեհնքների ամբողջ խրատությամբ:

Մի վերջին անգամ ամենուրեք պետք է ստուգել, թե ինչպես է դրված պահպանության գործը, ստուգել պահակներին, փոխել վատերին, լրացնել պակասը: Կազմակերպել գիշերային հսկիչ պոստեր, ստուգել, թե արդյոք պահակները չեն ընում գիշերները, և այլն:

Պետք է իմանալ, վոր պահպանության լավ կազմակերպումից է կախված մեր քրտնաշան աշխատանքով ստեղծած բերքի լրիվ հավաքումը:

ՊԼԱՆԱՎՈՐԵԼ ԲԵՐԲԱՅԱՎԱԲԸ

Սոցիալիստական տնտեսությունը պլանային տնտեսություն է. այնտեղ ամեն ինչ կատարվում է նախորոք մշակված պլանով: Այդ պատճառով կոլտնտեսությունում էս ամեն մի աշխատանք պետք է ընթանա նախորոք ծրագրված ձևով: Բերքահավաքը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ է ստուգել ըստ բրիգադների, բոտ

առանձին հողամասերի և այգիների՝ մեր այգիների բեր-
քի չափը և դրա հիման վրա կազմել բերքահավաքի վերջ-
նական, ճշտված պլանը: Այդ պլանը պետք է հասցնել
բերեալ, ողակ և մասսայականացնել բոլոր աշխատա-
վորներին մեջ: Յուրաքանչյուր կոլտնտեսական, ինչպես և
խորհրդատեսուցիական ամեն մի աշխատող կատարելապես
պետք է իմանա իր բերեալի պլանը, իմանա յուրաքան-
չյուր առանձին այգուց սպասվող բերքի քանակը:

Պետք է վերանայել արտադրանքի նորմաները, յեթե
դա անհրաժեշտ է, ճշտել նրանք ըստ բերեալների, ըստ
առանձին այգիների, այս տարվա բերքատվության համա-
ձայն, և այդ նորմաները նույնպես լաճն կերպով մասսա-
յականացնել: Գործը պետք է կազմակերպել աջնպես, վոր
ամեն մեկն իմանա բերքահավաքի ընթացքում իր կատա-
րելիք աշխատանքը և վարձատրման չափը:

Կոլտնտեսական բերեալները, ինչպես և ամբողջ կոլ-
տնտեսութունը և խորհրդատեսութունը պետք է մշակեն
բերքահավաքի շրջանի աշխատանքների որացուցային ծը-
րագիր, վորտեղ պետք է կոնկրետ կերպով նշվեն յուրա-
քանչյուր աշխատանքի կատարման ժամանակ, այդ աշխա-
տանքի համար հատկացվող բանվորական և քաշող ուժը,
ամբացվող ինվենտարն ու ամանեղենը և պատասխանա-
տու անձնավորութիւնը:

Աշխատանքի լավ դասավորումից, ուժերի ճիշտ բաշ-
խումից և կախված բերքի արագ և անկորուստ հավաքումը:

ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏԵԼ ԲԵՐԲԱՀԱՎԱՔԻ ՅԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԻՆՎԵՆՏԱՐԸ

Բերքը հաջողութեամբ և առանց կորուստների հավա-
քելու համար վճռական նշանակութիւն ունի ինվենտարի
նախապատրաստումը:

Ինվենտարի նախապատրաստութիւնը պետք է
սկսել ամենավորը գործիքներից՝ դանակներից, դուլերից,
կշեռքներից՝ մինչև խոշոր տակառներն ու չոնները:

Բերքահավաքի պլանի համաձայն, պետք է ստուգել
ամբողջ ինվենտարը: Անհրաժեշտ է հաշվառման յենթար-
կել լիզածը, նորոգել հները, շտապ կարգով ձեռք բերել
պակաս լեղածը: Պետք է լվանալ մեծ և փոքր տակառ-
ներն ու չաները, ծծումբ առնալ նրանց և բոլորը պահել
սարքին վիճակում՝ մինչև բերքահավաքը:

Ինչ ինվենտար է հարկավոր բերքահավաքի և վերա-
մշակման համար:

Բերքահավաքի համար այգում պետք է ունենալ սուք
զանակներ, ետի մկրատներ (սեկատոր), դուլեր և կողով-
ներ: Դուլները պետք է լինեն մաքուր, չժանգոտված. լավ
է ունենալ եմալած դուլեր, իսկ յեթե չկան այդպիսիներ-
ը, պետք է աշխատել ձեռք բերել ներկած դուլեր, կամ
ռեզում հնարավորութիւն ստեղծել յեղածները ներկելու,
վորովհետև թիթեղե դուլերի գործածութիւնն աննպա-
տակահարմար է. նրանք ազդում են խաղողի վորակի վրա
և փչացնում այն:

Այգում պետք է ունենալ նաև շալակի տակառներ
և պահեստի խոշոր տակառներ՝ մինչև մթերակայան փո-
խադրելը հավաքված խաղողը նրանց մեջ լցնելու համար:
Այգում անհրաժեշտ է ունենալ նաև կշեռքներ և
կշռաքարեր:

Խաղողն այգուց մթերակայան փոխադրելու համար
պետք է ունենալ սալերի և ֆուրգոնների վրա հարմարեց-
ված բաց տակառներ:

Խաղողի ընդունման համար «Արարատ»-ի մթերման
կետերում աշխատանքը պետք է այնպես կազմակերպել,

8007
37788



վոր յեկած խաղողն անմիջապես ընդունվի: Մինչդեռ ամեն տարի, ով յեղել ե «Արարատ»-ի մթերման կետերում, անսած կլինի, թե ինչ խոշոր հերթեր են գոյանում այնտեղ: Դրա հետևանքն այն ե լինում, վոր խաղողն այդուհի քաղում են և տեղ չլինելու պատճառով լցնում են գետին ու փչացնում, կամ ստիպված դադարեցնում են աշխատանքը:

Մթերման կետերում պետք ե պատրաստել խոշոր կշեռքներ՝ ամբողջ սայլը կամ ֆուրգոնը միանգամից կշռելու համար: Հերթեր չառաջացնելու համար պետք ե պատրաստել բարձրացնող սարքավորում (բլոկ, ճախարակ)՝ տակառները միանգամից բարձրացնելու և դատարկելու համար: Պետք ե ունենալ շալակի տակառներ, դուլլեր, յեղաններ, թիակներ: Պետք ե նախապատրաստված լինեն վերամշակման հրապարակները (կալէրը), վորպեսզի կշռված խաղողն արագ կերպով դատարկվի:

Մթերման կետերը պետք ե լրիվ կերպով ապահովված լինեն վերամշակող սարքավորումով, ինչպիսին են՝ ջարդիչները, չանչհանները, մամուլները, պոմպերը (նասոս) և այլն, վորպեսզի ընդունած խաղողն արագ կերպով վերամշակվի և չխանգարի անընդհատ հանձնողներին:

Կոլտնտեսականների ընդհանուր վերամշակման կետերում նույնպես պետք ե պատրաստել վողջ սարքավորումը: Լավ կլինի, յեթե այդ աշխատանքի ղեկավարները մեկ անգամ այցելեն «Արարատ» տրեստի մոտակա մթերակայանը և տեսնեն, թե նրանք ինչպես են նախապատրաստվում:

Կոլտնտեսությունների վերամշակման կետերում նույնպես պետք ե ունենալ կշեռքներ, դուլլեր, յեղաններ, թիակեր, մամուլներ, պոմպեր, տակառներ և այլն: Վերամշակ-

ման ինվենտարը պետք ե մաքուր լվանալ և ախտահանել ծծմբով:

Այն կոլտնտեսականներն ու մենատնտեսները, վորոնք վերամշակելիք խաղող ունեն, պետք ե նախորոք պատրաստվեն: Նրանք պետք ե ձեռք բերեն տակառներ, կարասներ, հարմարություններ ստեղծեն ջեջան (կնջեռ) պահելու համար, և այլն:

Այգեքաղի ինվենտարը վերը նշված բոլոր ողակներում այնպես պետք ե նախապատրաստել, վոր բերքահավաքի առաջին որվանից վող մի բանի պակասություն չզգացվի: Կոլտնտեսություններում բրիգադիրներն անձամբ պետք ե զբաղվեն այդ աշխատանքով:

Յերբ ամբողջ ինվենտարը պատրաստված ե, պետք ե մի վերջին անգամ ստուգում անցկացնել և հատուկ մաքրիկ նշանակել, վորոնք հսկելու և խնամելու յեն այն՝ մինչև բերքահավաքը:

ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏԵԼ ՏՐԱՆՍԴՈՐՏՆ ՈՒ ՃԱՆԱԴԱՐՆԵՐԸ

Բերքահավաքին կազմակերպված դիմավորելու գործում խոշոր տեղ ե գրավում տրանսպորտի և ճանապարհների նախապատրաստումը: Վորքան ել լավ նախապատրաստված լինենք, յեթե վատ ե կազմակերպված փոխադրական գործը, յեթե պատրաստ չեն ճանապարհներն ու կամուրջները, աշխատանքն անհաջող կընթանա՝ տեղի տալով զգալի կորուստների:

Բրիգադները, համաձայն բերքի պլանի, պետք ե ստուգեն ամբողջ տրանսպորտի դրուկյունը: Պետք ե իմանալ, թե ամեն որ քանի սայլ կամ ֆուրգոն ե պահանջվում: Պետք ե ստուգել, թե սայլերն ու ֆուրգոններն ինչ բանի

վերանորոգման կարիք ունեն և վերանորոգել տալ տա-
լին հերթին: Նախորոք սայլերի և ֆուրգոնների վրա պետք
է հարամարեցնել խաղող փոխադրող տակառներ:

Անհրաժեշտ է ստուգել քաշող ուժը, պարզել նրա
գրաւթյունը և, յետ անհրաժեշտ է, բերքահավաքից մի քա-
նի որ առաջ հանգիստ տալ ու լավ կերակրել կենդանի-
ներին, քանի վոր բերքահավաքի ամբողջ ընթացքում, վորը
տեւելու յե 20—25 որ, նրանք աշխատելու յեն լարված
կերպով:

Բերքահավաքը լավ կազմակերպելու համար պակաս
նշանակութիւն չունի ճանապարհների և կամուրջների
կարգի բերելը:

Այգեքաղի ժամանակ յերբեմն ակնհայտ էս լինում
այսպիսի փաստերի.— խաղողով բարձած սայլը կամ ֆուր-
գանը կամըջով անցնելիս անիվը կամըջից ցած է ընկել,
ֆուրգոնը շուռ է յեկել, շիրան և խաղողը թափվել են
հողերի ու ցեխերի մեջ, կոտրվել է և՛ սայլի այս կամ
այն մասը, ջարդվել են տակառները, վերավորվել է սայլա-
պանը, և այլն: Կամ բարձած սայլը կանգ է առել ճանա-
պարհի լճացած ջրի և խոր ցեխի մեջ, ու յեղները չեն
կարողանում սայլը դուրս բերել այդտեղից: Հաճախ տես-
նում էս, թե ինչպես ճանապարհի խորդուբորդ լինելու,
տակառները սայլի վրա լավ չամրացնելու հետևանքով շարժ-
վում են այս ու այն կողմ և թափում շիրալի զգալի մասը:

Այս բոլորը փոշ միայն դժվարացնում ու դանդաղեց-
նում է փոխադրումը, այլև անդրադառնում է բերքի քա-
նակի ու վորակի վրա՝ զգալի փաստեր պատճառելով մեր
տնտեսութեանը: Ահա այդ ամենից խուսափելու համար
պետք է նախորոք վերանորոգել քանդված կամուրջները,
լախացնել նեղ կամուրջները, ստուգել նրանց ամրութիւնը:

Պետք է հավաքել ճանապարհների վրա թափված մանր ու
մեծ քարերը, չորացնել լճացած ջրերը, հարթել խորդու-
բորդ տեղերը (խանդակները) և հատուկ ուշադրութիւն
դարձնել այգեմիջյան այն միջնակների վրա, վորտեղից
անցնելու յեն սայլերը: Այդպիսի տեղերը նույնպես պետք
է հարթվեն, վորպեսզի փոխադրումն անխափան կերպով
ընթանա:

ՄԱՌԱՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Բերքահավաքի նախապատրաստման կարեւորագույն
ոգակներից մեկն էլ մառանների նախապատրաստումն է:

Մառանների նախապատրաստման նշանակութիւնը
բարձրանում է հատկապես այն պատճառով, վոր այգիներ-
ի լավ մշակութան և բերքատուութան անընդհատ բարձ-
րացման շնորհիվ, մեր այգեգործական կոլտնտեսութիւն-
ները պետութեան և մթերող միջուկ կազմակերպութիւն-
ների հանդեպ իրենց ունեցած պարտավորութիւնները
կատարելով և գերակատարելով հանդերձ՝ մեծ քանակու-
թյամբ խաղող են ունենում: Նրանք բերքի մի մասը վերա-
մշակում են ընդհանուր ձևով, իսկ խոշոր մասը բաշխում
են կոլտնտեսականների աշխուրներին, իսկ այդ մասը կոլ-
տնտեսականները վերամշակում են իրենց մոտ: Մյուս կող-
մից՝ կոլտնտեսականները բավականաչափ բերք են ստանում
իրենց հատկացված տնամերձ այգիներից, վորի մի զգալի
մասը նույնպես վերամշակվում է: Ահա այս առկալեւորից
էլ մառանների նախապատրաստումը տարվում է յերկու
ուղղութեամբ՝ կոլտնտեսութեան ընդհանուր մառանների
նախապատրաստում և կոլտնտեսականների մառանների
նախապատրաստում:

Յերկու դեպքում էլ հատուկ ուշադրութիւն պետք է

դարձնել մառանների մաքրության վրա: Այդ տեսակետից ընդհանուր մառանները պետք է որինակելի լինեն: Պետք է իմանալ, վոր գինին արագ փչացող մթերք է. նա հեշտությամբ ընդունում է իր մեջ շրջապատում գտնված վատ հոտերը, ինչպես և հիվանդանում է իր մեջ ընկած զանազան սնկերի կամ բակտերիաների ազդեցությունից: Հետեւապես, պետք է աշխատել, վոր մառանում կողմնակի վատ հոտեր, ինչպես և հիվանդություններ առաջ բերող միկրոօրգանիզմներ չլինեն, վորի համար պետք է շատ մեծ մաքրություն պահպանել: Մինչդեռ շատ քիչ կոլտընտեսություններում մենք մաքուր և առողջապահական տեսակետից բավարար պայմաններում գտնվող մառաններ ունենք:

Ի՞նչը պետք է նախապատրաստել մառաններում: Ամենից առաջ՝ պետք է հեռացնել ափսոսելից բոլոր ավելորդ բերքը, ամեն տեսակի մթերքները, ջարդված կամ գործածության համար անպետք տափառներն ու կարասները՝ թողնելով միայն այն, ինչ անհրաժեշտ է: Պետք է սպիտակեցնել պատերը, կանոնավորել մառանի հատակը, վերջինս, յեթե ցեմենտե յե, պետք է մաքուր լվանալ: Այնուհետեւ պետք է մի քանի անգամ լվանալ կարասներն ու տափառները և ծծմբով ախտահանել:

Ախտահանումը պետք է կատարել այսպես. կարասների համար կարելի յե վերցնել վորոշ քանակով ծծումբ, լցնել չուգունե թասի կամ կավե ամանի մեջ, վառել ու կախել կտրասում:

Գինու տափառների ախտահանման համար պետք է պատրաստել ծծմբե ժապավեններ, վոր և վառում ու կտրում են տափառի մեջ: Ծծմբե ժապավենը կարելի յե պատրաստել այսպես. վերցնել 3—4 ամ լայնությամբ և մաս

25—30 ամ յերկարությամբ թղթե ժապավեններ. թիթեղե կամ չուգունե ամանի մեջ լցնել ծծումբ և գնել կրակի վրա: Յերբ ծծումբը կհալվի, հեղուկ կգառնա, պետք է թղթե ժապավենները մի ծայրից բռնած թաթախել հեղուկի մեջ (սուղուխի նման) և չորացնել:

Ամբողջ մառանն ախտահանելու համար մառանի ծափալի յուրաքանչյուր խորանարդ մետրին պետք է վերցնել 30 գրամ ծծումբ և այլել՝ նախորդ փակելով դուռն ու լուսամուտները և 5—6 ժամ թողնել, վոր ծծմբի ծուխը թափանցի մառանի բոլոր անկյունները:

Այս ամբողջ աշխատանքները մառանում պետք է ավարտել բերքահավաքից առնվազն 5—10 որ առաջ, վորպեսզի մառանը պատրաստ լինի հենց առաջին որվանից ընդունելու քաղած խաղողը:

ԱՆԽՆԱ ՊԱՅԳԱՐԵԼ ԿՈՒԼԱԿԱՅԻՆ ՄԵԲԵՆԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Յուրաքանչյուր կոլտնտեսություն շահագրգռված պետք է լինի վոչ միայն բերքի քանակով, այլև պետք է ձեռք առնի բոլոր միջոցները՝ բերքի պահանջվող վորակն ապահովելու համար:

Բերքի վորակի բարձրացման համար հատկապես խոշոր նշանակություն ունի այգու ջուրը ժամանակին դադարեցնելը: Մեր վորոշ կոլտնտեսություններում շարունակվում է այն հին և վատ սովորությունը, յերբ բերքահավաքից մի քանի որ առաջ այգին ջրում են: Այդ սովորությունը կուլակային-առեւվարական հոգեբանության մնացորդ է: Անխնա կերպով պետք է վերացնել այն ամենը, ինչ կուլակությունից վատ ժառանգություն է մնացել:

Կալանաեսական կարգերի հաղթանակի շնորհիվ, գյու-

դացիութունը դարձել է իր հալալ աշխատանքի տերը, նա ինքն է տնտրինում իր ժրաշան աշխատանքով ստացված բերքը: Բերքը մենք հանձնում ենք մեր հարազատ պետությանը, մեր կոոպերատիվ կազմակերպություններին: Հետեվաբար մենք պետք է որեցոր ուժեղացնենք պաշքարը կուլակի մեքենայութունների դեմ-ալգին բերքահավաքից առաջ ջրելու, բերքի քանակն արհեստականորեն բարձրացնելու համար:

Յուրաքանչյուր այգալիսի դեպք պետք է արժանանա ամենախիստ դատապարտման և պատժվի որենքով:

Մենք պետք է պետությանը հանձնենք բարձրորակ խաղող: Իսկ դրա համար, վորպես կանոն, այգին վերջին անգամ պետք է ջրել վոչ ուշ, քան բերքահավաքից 20—30 որ առաջ:

ՅԵՐԲ ՍԿՍԵԼ ԱՅԳԵԳԱԼԸ

Համատարած այգեքաղը պետք է սկսել այն ժամանակ, չերբ խաղողը հասել է ադդյունաբերական հասունության, այսինքն՝ չերբ նրա հասունությունը համապատասխանում է ավյալ այգեգործական արդյունաբերության նպատակներին: Այսպես՝ խաղողի հյուլի պատրաստելու համար կարելի չե այգին ավելի շուտ քաղել, քան թունդ և լիքջորային գինիներ պատրաստելու համար, վորպեսզի ստացվի թարմացուցիչ և զովացուցիչ հատկություն ունեցող խմիչք:

Մեր յերկրի հողային և կլիմայական պայմանները թույլ են տալիս պատրաստելու թանգարժեք և եքսպորտային նշանակություն ունեցող թունդ և լիքջորային գինիներ, ինչպիսին են՝ պորտվենը, մադերան, մուսկատները և այլն, վորոնց արտադրության համար վորչափ խաղողը

շատ քաղցքանա, այնքան ավելի լավ է հետեվապես, այդ տեսակետից, վորքան ուշ քաղենք այգին, այնքան բարձրորակ խաղող կունենանք արտադրության համար: Սակայն, քանի վոր այգեքաղը տեվում է 20—25 որ, բոլոր այգիները հնարավոր չե միանգամից քաղել, այգեքաղից հետո այգում մի շարք աշխատանքներ պետք է կատարվեն, մանավանդ այգեթաղը, վորը տեվում է մինչև ձյուն գալը, ապա ուրեմն այգեքաղի սկիզբը շատ չի կարելի ուշացնել:

Մեզ մոտ ընդհանրապես համատարած այգեքաղի սկիզբը շատ իրավացիորեն հայտարարվում է հոկտեմբերի 5—7-ը:

ՍԵՂԱՆԻ ԽԱՂՈՂՆԵՐԻ ԲԵՐԳԱՅԱՎԱԲԸ

Անմիջապես տեղում սպառելու և մեր քաղաքներին ու արդյունաբերական վայրերի աշխատավորությունը թաքմ խաղող մատակարարելու համար, բերքահավաքն սկսվում է համատարած այգեքաղից շատ առաջ և կատարվում է աստիճանաբար: Առաջին հերթին սկսում են հավաքել վաղահաս փոփոխակները, ինչպեսիք են՝ սե և սպիտակ յեղտեղարիները, սե և սպիտակ խալիլիները, ասկյարին և քիշմիշը: Դրանցից հետո՝ ավելի ուշ հասնողները՝ խարջին, դառանդմակը, մախալին, կախեթը (Ղամարլու) և այլն:

Սեղանի խաղողները պետք է հավաքել շատ խնամքով: Այստեղ հատուկ նշանակություն է ստանում նրանց թաքմ և առողջ վիճակում տեղ հասցնելը: Հաճախ այնքան անխնամ են վերաբերվում այս գործին, վոր խաղողը մինչև սպառողին հասնելը արորվում է, փչանում և ուտելու համար անպետքանում: Դրա համար ել հենց այգում պետք է ցուլց տալ ուշադիր վերաբերմունք. վողկուլոնները պետք է քաղել սուր դանակներով, բռնելով վողկուլակներից:

Սեղանի խաղողները հավաքելու համար պետք է գործածել ուռենուց (ճիւղու) պատրաստած կողովներ, իսկ հեռավոր վայրեր ուղարկելու համար պետք է ունենալ հինգ-տասը կիլոյանոց փոքր, ստանդարտ արկղեր:

Յեթե խաղողն ուղարկում են մոտիկ շուկաները, այդ դեպքում քաղած խաղողն զգուշութեամբ պետք է դարսել կողովներով, կամ արկղների մեջ՝ կոթունները դեպի վերև դարձրած, փակել արկղների բերանը, իսկ կողովների յերեսին կապել թանգիֆ՝ փոշուց պահպանելու համար, ապա բարձել ֆուրգոնին կամ ավտոմոբիլին և տեղափոխել:

Հեռավոր վայրեր խաղող տեղափոխելիս պետք է ավելի շատ խնամքով նախապատրաստել: Հեռավոր վայրեր պետք է ուղարկել ավելի դիմացկուն տեսակները, ինչպես են՝ կախեթը, մսխալին, հաչաբաշը, ալախկին և այլն:

Խաղողը պետք է քաղել շատ զգուշ, այնպես, վոր վոչ մի հատիկ չջարգվի: Այնուհետև պետք է փողկուլջուների վրայից մեկ-մեկ հեռացնել հոտած, չորացած կամ վնասված պտուղները, և ամբողջ խաղողը մի որ փուխ, վոր պեսպի մի քիչ թառամի: Հաջորդ որը խաղողն զգուշութեամբ պետք է դարսել նախորդ արկղների մեջ, վերջիններին մակերեսից բավական բարձր և, առանց վախենալու, արկղի կափարիչի տախտակները վրան դնելով, զգուշութեամբ սխմել՝ խուսափելով պտուղները ջարդելուց: Այս ձևով խաղողի պտուղները բոլոր կողմերից իրար սխմելով՝ արկղում վոչ մի ազատ տեղ չի մնում, վոր փոխադրելիս ճանապարհին նրանք շարժվեն և տրորվեն: Այնուհետև պետք է մեխել կափարիչի տախտակները, և արդեն նա պատրաստ է ուղածդ տեղը փոխադրելու: Այս ձևով պատրաստած խաղողը միանգամայն թարմ վիճակում կարելի է տեղափոխել բավականին հեռու տեղեր, ինչպես՝ Մոսկվա, Լենինգրադ և այլն:

ՊԱՀՈՒՆԻ ԽԱՂՈՂՆԵՐԻ ԲԵՐՔԱՅԱՎԱԲԸ

Ձմեռվա թարմ գործածութեան համար, բնդհանուր բերքահավաքից առաջ պետք է կատարել պահունի խաղողների բերքահավաքը, վորի համար նախորդ պետք է տեղ և կախելու հարմարութիւններ ստեղծել, ինչպես՝ կանափի փայտից պատրաստված կախանի փայտեր, ճիւղու, սղոցի թեփ և այլն: Կախելու համար պետք է ընտրել այնպիսի տեղ, վորտեղ քացախ, գինի, մաճառ, մանավանդ, շեջա չկա:

Ձմեռվա պահելու համար մեզ մոտ հասկացվում են հաչաբաշը, մսխալին, կախեթը, ամբարին, ալախկին և այլն. դրանք ունեն ամուր մաշկ և յերկար ժամանակ պահվում են: Աշտարակում մասամբ պահում են նաև խարջին՝ համեմատաբար շուտ գործածելու համար:

Պահունի խաղողների բերքահարաքի և փոխադրման կազմակերպման համար ավելի մեծ զգուշութիւն է պահանջվում, քան սեղանի խաղողների:

Խնամքով, ժամանակին քաղած և լավ պահված խաղողը շատ յերկար, մինչև դարուն կարող է դիմանալ:

Պահունի խաղողները պետք է հավաքել բնդհանուր բերքահավաքից 5—10 որ առաջ: Պետք է աշխատել այդ խաղողները հավաքել աշնան անձրևներից առաջ, վորովհետև անձրևի տակ ընկած խաղողը յերկար չի դիմանում:

ԿԱՄԱՏԱՐԱԾ ԲԵՐՔԱՅԱՎԱԲԸ

Համատարած բերքահավաքը կատարվում է այն ժամանակ, յերբ խաղողը պիտանի չե վերամշակման համար: Սրաբառյան դաշտում այդ ժամանակը՝ յերկար ուարիների ընթացքում, ընկնում է հոկտեմբերի սկզբներից մինչև 20—25-ը: Հոգեփոխման վորոշմամբ, այս տարի համատար-

րած բերքահավաքն սկսվելու չե հոկտեմբերի 5-ից և տե-
վելու չե մինչև 25-ը:

Համատարած բերքահավաքի նախապատրաստման հա-
մար վերևում բավականաչափ կանգ առանք:

Բերքահավաքի հենց առաջին որվանից կադմ ու պատ-
րաստ պետք ե անցնել աշխատանքի: Նախորոք պետք ե
վորոշել թե վորանից ե սկսվում աշխատանքը: Առաջին
հերթին պետք ե քաղել ծալրերում ու հեռու ընկած այգի-
ները և այն այգիները, վորոնց բերքն այս կամ այն պատ-
ճառով փչանում ե:

Գործը պետք ե կազմակերպել այնպես, վոր քաղած
խաղողն անմիջապես փոխադրվի մթերակաջան: Պետք ե
կտրականապես վերացնել այն սովորութիւնը (շամարլու),
յերբ խաղողը քաղում ու կիտում են գետնի վրա և հետո
փոխադրում: Քաղած խաղողը պետք ե անմիջապես լցնել
առկանները և փոխադրել:

Անհրաժեշտ ե նաև վերացնել վերածղակվող խաղողը
կողովներով տեղափոխելը: Խաղողը քաղելու համար գոր-
ծածվող դուլներն ամեն ոք, աշխատանքն սկսելուց առաջ,
անհրաժեշտ ե մաքուր լվանալ:

Խաղողը պետք ե քաղել սուր դանակներով կամ ետի
մկրատներով (սեկատոր): Արգելվում ե ձեռքով կամ բուխ
դանակներով խաղողը քաղելը:

Խաղողը թփից այնպես պետք ե կտրել, վոր, ինչպես
ասում են՝ վազը «չզգաս»: Ձեռքով քաղելիս կամ բուխ գոր-
ծիքով աշխատելիս խաղողը տրորվում ե, շիրան թափվում,
հաճախ վողկուլոն ընկնում ե գետին ու կեղտոտվում: Ձեռ-
քով քաղելիս վողկուլոյի հետ միասին հաճախ ջարդվում են
բերքատու մատերը:

Խաղողից վորակյալ խմիչքներ և զանազան մթերքներ
պատրաստելու համար հատուկ ուշադրութիւն պետք ե

դարձնել բերքի տեսակավորման վրա: Այստեղ շատ բան
կախված ե հատկապես «Արարատ» տրեստից և նրա բա-
ժանմունքներից. վերջիններս այդ առթիվ պետք են երկա-
յացնեն իրենց պահանջները: Կուլտուրական այգեգործա-
կան շրջաններում խաղողը հավաքելու ժամանակ իսկույն
տեսակավորում են:

Բերքի տեսակավորումը պետք ե կատարվի քաղելու
պրոցեսում, վորն ընթանալու չե հիմնականում յերեք
ուղղութիւնով: Ամենից առաջ պետք ե առանձնացվեն հո-
տած խաղողները, վոր արդուներ ե ժամանակին պոլի-
խորդիս միջատի դեմ պայքար չառնելու: Այնուհետև պետք
ե առանձնացնել հիվանդոտ, չորացած և խակ մնացած
վողկուլոյները: Դրանք վոչ մի դեպքում չպետք ե խառն-
վեն մնացած խաղողին: Այնուհետև պետք ե առանձ-
նացվեն սև և սպիտակ տեսակները: Յեւ, վերջապես, վո-
րոշ նպատակների համար անհրաժեշտ ե առանձնացնել
առանձին սորտերը, որինակ՝ խարջին, ճիլարը, մսխալին,
կախեթը և այլն:

ՊԱՅԳԱՐ ԿՈՐՈՒՍՏԻ ԴԵՄ

Համկոմկուսի Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի
վորոշման մեջ ասված ե. «Բերքահավաքի ամբողջ աշխա-
տանքները պետք ե կատարվեն կորուստների դեմ պայքար
կազմակերպելով»:

Կորուստների դեմ մղվող պայքարն ավելի մեծ նշա-
նակութիւն ե ստանում խաղողի բերքահավաքի ժամա-
նակ: Բերքի 10—15⁰/₀-ը կորչում ե մեր անկազմակերպ-
վածութիւն և գործին անհոգի վերաբերմունք ցույց տալու
հետևանքով:

Պետք ե իմանալ, վոր յուրաքանչյուր վողկուլոյ մեծ
աշխատանքով ե ձեռք բերված և անհրաժեշտ ե բոլորի ու-

շաղրաւթյունը կենարոնացնել բերքի անկորուստ հավաքման վրա: Մինչդեռ մեր այգիներում ամեն տարի ավելի շատ բերք է լինում, քան մենք հավաքում ենք:

Բերքի կորուստներ տեղի յեն ունենում զանազան ճանապարհներով: Կորուստներ լինում են և՛ պահպանութիւնը վատ կազմակերպելու, և՛ ինվետարն ու ամանեղենը վատ նախապատրաստելու հետեանքով: Սակայն բերքի խոշոր կորուստները տեղի յեն ունենում այգեբաղի, բերքի փոխադրման և վերամշակման ընթացքում: Դրա համար ել ուժեղ պայքար կորուստների դեմ պետք է մղել այս շրջանում:

Քիչ չեն դեպքեր, յերբ խաղողը քաղելիս յերբեմն դիտաւորյալ, յերբեմն գործին անհոգի վերաբերվելու հետեւանքով մեծ քանակութեամբ խաղող է մնում վաղերի վրա: Դրա համար ել պետք քաղի ընթացքում սահմանել ուժեղ հսկողութիւն և, առանձին այգիներն ու կտորները քաղելուց հետո, հատուկ մարդկանց միջոցով ստուգել՝ մաքուր է քաղված, թե՛ վոչ, վաղերի վրա չեն մնացել վողկույցներ, և այդպիսի դեպքում՝ նորից հավաքել տար:

Գատահում են և այսպիսի դեպքեր. խաղողի վողկույցն անհարմար տեղից բռնելու հետեանքով գցում են ցած՝ թափվում են նրա վրայի պտուղները, վերջիններիս մեծ մասը ջարդվում է, հոսում է շիրան ու փչանում: Շատ անգամ գետին ընկած խաղողը դժվարանում են վերցնել, մինչդեռ պետք է թափված պտուղներն անգամ հավաքել:

Այգեթաղի ընթացքում յուրաքանչյուրից պահանջվում է մեծ զգուշութիւն, հոգատարութիւն և խնամքոտ վերաբերմունք:

Խոշոր կորուստներ լինում են գուլերի և աակտոնների ձեղքեր ու անցքեր ունենալու հետեանքով, վորտե-

ղից շիրան հոսում է: Կորուստներ լինում են խաղողը դուլերից շալակի տակառները լցնելիս, խաղողը սայլերին ու ֆուրգոններին բարձելիս ու դատարկելիս, յերբ մարգիկ աշխատում են անբարեխիղճ կերպով, Կործին նայում են մատների արանքով և աշխատանքի ժամանակ հանդես են բերում այսպես կոչված «շփոթութիւն»:

Խաղողը փոխադրելիս պետք է տակտոններն ամրացնել սայլերի վրա, տակը խոտ դնել, լցնել կիսատ, վորպեսզի ճանապարհին չշարժվի և չթափվի:

Վոչ մի վողկույց, վոչ մի պտուղ խաղող, վոչ մի կաթիլ շիրա չպետք է կորչի կամ փչանա՝ այս նշանաբանի տակ պետք է կատարել բերքահավաքը:

Այս տարվա խաղողի բերքահավաքը պետք է ընթանա չափազանց կազմակերպված, լավ նախապատրաստված և առանց կորուստների:

Աշխատանքների նախապատրաստման սկզբից մինչև բերքահավաքի վերջը պետք է լախ կերպով ծավալել սոցիալիստական մրցումն ու հարվածայնութիւնը: Մրցումը պետք է ընդգրկի կոլտնտեսութիւնները, բրգադները, ողակները, անհատ կոլտնտեսականներին և մենատնտեսներին: Վոչ վոք չպետք է դուրս մնա մրցութեան շարքերից:

Սոցիալիստական խանդավառ արշավ դեպի բերքահավաքը:



Խմբագիր՝ Գ. ԳՐԶԵՆԵԱՆ
Տեխ. խմբ.՝ Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ
Լեզվ. խմբ.՝ ԱՐԲ. ԳՐԻԿՈՐՅԱՆ
Մտքագրիչ՝ ԳԱՐ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գրավելի լիազոր Ս.—440, հրատ. Ք 273, պատվեր Ք 585, տպում 3000
Հանձնվել է տրտադրության 1935 թ. սեպտեմբերի 28-ին
Ստորագրվել է մպելու 1935 թ. հոկտեմբերի 3-ին

Գյուլգերատի ուղարան, Յերեան, Նալբանդյան 11

ՀՀ Ազգային գրադարան



NL0288709

Ч. 1. 10. 400.

20.045



П. ШАТВОРЯН
ОБОР ВИНОГРАДА

СЕЛЬХОЗГИЗ 1935 ЗРИВАНЬ